



“.....” 201

..... /

ՀՐԱՄԱՆ N 66-Ա

17 մարտի 2018թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N45-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարի 2013 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N45-Լ հրամանով հաստատված հավելվածի 83-րդ կետից հետո լրացնել 83.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«83.1 Աշխատողին արգելվում է աշխատանքից ազատվելուց հետո աշխատանքային գործունեության ընթացքում ծառայողական տեղեկատվությունը՝ նախարարության ծրագրերով մշակված սիյուռքին վերաբերող տարբեր բնույթի տեղեկատվական տվյալները, հետազոտություններն անձնական և ծառայողական նպատակներով օգտագործել:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ